«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 43/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 05.04.2019թ. ժամը 15:30

Համաձայն 20.03.2019թ-ին ՀՀ Քննչական Կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 28.03.2019թ-ին ստացված,միջնորդագրի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Արտյոմ Աբելյանի սնանկության գործով կառավարիչ՝Աշոտ Խաչատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Ապրիլի 05-ին,15-00-ին՝ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում,հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի հետաձգված նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարությունն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ՀՀ Քննչական Կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ՝Ա.Խաչատրյանը:
Քաղաքացի Արտյոմ Աբելյանի սնանկության գործով կառավարիչ՝Աշոտ Խաչատրյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Քաղաքացի Արտյոմ Աբելյանի սնանկության գործով կառավարիչ՝Աշոտ Խաչատրյանը
Դիմումատու ՀՀ Քննչական Կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ՝Ա.Խաչատրյանը պատշաճ ծանուցված էր բայց նիստին անհայտ պատճառնորով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չէր ապահովել:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1.20.03.2019թ-ին ՀՀ Քննչական Կոմիտեի Արմավիրի մարզային քննչա կան վարչության Վաղարշապատի քննչական բաժնից ստացված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 28.03.2019թ-ին ստացված,միջնորդագրի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Արտյոմ Աբելյանի սնանկության գործով կառավարիչ՝Աշոտ Խաչատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ դիմումատու ՀՀ Քննչական Կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ՝Ա.Խաչատրյանը պատշաճ ծանուցված էր բայց հանձնաժողովի նիստին անհայտ պատճառնորով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չի ապահովել:
Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներին հայտնել կարծիք հանձնաժողովի նիստը առանց դիմումատու շարունակելու վերաբերյալ: «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամներից՝Ա.Աղամյանը արտահայտեց իր

կարծիքը առ այն,որ առաջին հերթին ներկայացված է միջնորդագիր այլ թե դիմում,որը կարելի է քննել դիմումի քննարկման ընթացակարգով և երկրորդ եթե դիմումատուն պատշաճ ծանուցվել է հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ և իր ներկայությունը չի ապահովվել,ուստի կարելի է ընդունել,որ նա իր միջնորդությամբ նշված փաստական հանգամանքներից և ներկայացված փաստաթղթերից զատ այլ բան ներկայացնելու չունի և քանի որ քննվելու է սնանկության գործով կառավարչների հարցը ու կառավարիչը ներկա է նիստի, ուստի կարելի է նիստը շարունակել դիմումատուի բացակայությամբ,կարգապահական վարույթը շարունակելով դիմումում նշված փաստական հանգամանքների և ներկայված ապացույցների շրջանակներում:

Մյուս հանձնաժողովի անդամները քննարկեցին ստեղծված իրավիճակը և ընդունեցին առաջարկը նիստը սկսել առանց միջնորդաբերի՝ լսելով սնանկության գործով կառավարչի բացատրությունը և հետո անդրադառնալ եզրակացության գալու հնարավորություններին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը ստուգեց նիստի մասնակիցների ինքնությունը ներկայացրեց միջնորդությունը և կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց՝քաղաքացի Արտյոմ Արամի Աբելյանի սնանկության գործով կառավարիչ՝Աշոտ Խաչատրյանին,ով ներկայացրեց հանձնաժողովին,որ սությունԱՐԴ/0072/04/16 սնանկության գործը վարույթ է վերցվել 23.08.2016թ-ին,պարտապանին հայտնաբերելու համար հայտարարվել է հետախուզում,որի բացասական արդյունքներով էլ,որպես բացակայող պարտապան 27.11.2017թ-ին կայացվել է սնանկ ճանաչելու վճիռը,որի հիմքով արդեն 09.11.2017թ-ին նշանակվել եմ սնանկության գործով կառավարիչ:

Ստանձնելով ՍԳ կառավարչի պարտականությունները իմ կողմից մի քանի անգամ այցելություններ է կատարվել բնակության հասցե,որի արդյունքում հայտնաբերել եմ պարտապանին և նրա գրավի առարկա գույքը:Օրենքով սահմանված կարգով 09.02.2017թ-ի ծանուցումներով 13.02.2017թ-ին ՀՀ Արմավիրի մարզ,գ.Գեղակերտ,Իսահակյան փող.10 հասցեյում նշանակել են պարտապանի գույքի գույքագրման օր և նշված օրը կատարել եմ գույքագրում,գույքագրելով գրավի առարկա 2 ավտոմեքենաները /գույքագրման ակտ/:

Գույքագրված գույքը գտնվում էր ձյան ծածկույթի տակ և պարզ երևում էր,որ չի օգտագործվում,նաև վարույթում դրամական միջոցների բացակայության պատճառով, իմ կողմից որոշում է կայացվել պահպանությունը իրականացնել պարտապանի միջոցով,որի նպատակով կազմվել է ի պահի պայմանագիր և առաջարկվել է պարտապանին ստորագրել և պահպանել գույքը:Պարտապանը չի համաձայնել ստորագրել պայմանագիրը,բայց քանի որ մեքենաները գտնվում էին պարտապանի բնակության վայրում փակի տակ և պարտապանն էլ ունի Օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված համագործակցության պարտականություն, ուստի կատարվել է հաճախումներ,որոնց ընթացքում կատարվել է գնահատման աշխատանքներ/տեղազննում,մեքենաների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն/,բայց ապահովված պարտատիրոջ վերջին հաճախման ընթացքում մեքենաները չէն հայտնաբերվել:

Իմ կողմից կատարված աշխատանքների արդյունքում հնարավոր չի եղել պարզել մեքենաների գտնվելու վայրը:Պարտապանը հրաժարվում է բացատրություններ տալուց,չի հայտնում ավտոմեքենաների գտնվելու վայրը,նույնիսկ խուսափում է հանդիպելուց:

Վերոնշյալի հիմքով 15.08.2018թ-ին միջնորդություն է ներկայացվել դատարանին ավտոմեքենաների վերաբերյալ հետախուզում հայտարարելու համար:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին առ այն,որ կառավարիչը պարտապանի կողմից պատասխանատու պահպանության վերցնելու,հրաժարվելուց հետո ձեռնարկել է արդյոք միջոցներ գույքը տեղափոխելու ուղղությամբ:

Սնանկության գործով կառավարիչը պատասխանեց,որ ընդհանրապես ՍԳ կառավարչի լիազորությունները չի տալիս հնարավորություն առգրավվելու գույքը,որից հետո կստեղծվի իրավական հիմք գույքի տեղափոխման համար և բացի դրանից պարտապանը ունի կոշտ

գրավի պայմանագիր,որը նրան հնարավորություն է տալիս օգտագործել գրավի առարկան և դա արգելել կառավարիչը իրավասու չէ,մինչև լուծարման գործընթացը սկսելը,բայց քանի որ տվյալ դեպքը վերաբերվում է ֆիզիկական անձին.ապա այս դեպքում լուծաչման գործընթացի սկիզբը չի հայտարարվում որոշմամբ,այսինք այստեղ նույնպես անորոշություն էր:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ կառավարչի կողմից կատարվել են «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 56-րդ և 57-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգերը և միջոցներ է ձեռք առել օրենքի 29-րդ հոդված 1-ի մասի /ե/ կետով նախատեսված իր լիազորությունների,այն է գույքագրված գույքի պահպանության կազմակերպման համար,բայց չկանխորոշելով պարտապան՝Արտյոմ Արամի Աբելյանի հակաօրինական գործելաոճը,որը սահմանված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ և 48-րդ հոդվածներով,գրավի պայմանագրով և այլ օրենքներով ու օրենսգրքերով և քանի որ կառավարիչը կանխավարկած պետք է ունենա դիմացի կողմի օրենքների կատարման այլ ոչ թե օրենքների խախտման գործելաոճը,իր գործողությունները կառուցում է այդ ելակետի: Հաշվի առնելով դա,ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և դիմումում շարադրված փաստերը հանձնաժողովի նախագահն առաջարկեց կարճել կարգապահական վարույթը սնանկության գործով կառավարչի կողմից կարգապահական խախտում չկատարելու պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և առարկությունները,տվեցին և ստացան համապատասխան հարցեր և արդյունքում համաձայնելով նախագահի առաջարկին, քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1.20.03.2019թ-ին ՀՀ Քննչական Կոմիտեի Արմավիրի մարզային քննչական կան վարչության Վաղարշապատի քննչական բաժնից ստացված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 28.03.2019թ-ին ստացված,միջնորդագրի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Արտյոմ Աբելյանի սնանկության գործով կառավարիչ՝Աշոտ Խաչատրյանի գործողությունների /անգործության/, գործողությունները օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության,սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան